

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԼԻ. ՎԵՐՋԱԲԵՐԻ ՑՈՒՅՆ

---

**ԶԵՌՆԱՐԿ**

**”ԴԵՊԻ ԿՈՄՈՒՆԱ“**

ԸՆՐԱՆՑՐԱՆՎ ՊԱՐԵԳԱՎՆԵՐԻ ՀԵՐԵՐ

Ա. ԴԱՒՐԴԱՐԵԱՆ

xxxx

---

**ՊԵՏԱՐԱՍ 1930 ՏԵՐԵՎԱՆ**

*Lucas*  
200.11

ՔԵՂԵԶԱԿԱՆ ԼՈՒՍՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԼԽ. ՎԵՐՏԱԽԹՅՈՒՆ

ԶԵՌՆԱՐԿ

”ԴԵՊԻ ԿՈՄՈՒՆԱՀ“

ԱՅՐԻԵՆԱՐԾՈՎ ՊԱՐԱՊԱԼՆԵՐԻ ՀԱՐԵՐ

Մ. ԴՈՒՐԴԱՐՅԱՆ

A 16305  
A 8090



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐԵՎԱՆ - 1929

---

**Տպագրվում և ՀՍԽՀ Պետգիտ-  
խորհի թույլտվությամբ**

---

**Հրատ. № 1107**

**ԹԵՏՐԱՏԻ ՑԵՐԿՈՐԴԻ ՏՊԱՐԱՆ ՑԵՐԵՎԱՆՈՒՄ**

**Գրասեպ. № 2825(բ)      Տիրաժ 1000      Գաղվ. 1117**

## ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

«Դեպի կոմունա» այբբենարանով աշխատողներին

Այբբենարանը կազմած և ամբողջ բառերի ու վանկերի՝ վերլուծական - համադրական մեթոդով՝ Հնչյունային մշակմամբ:

Կարդալու ուսուցման տեխնիկայի բնագավառում այբբենական մասն իր մեջ պարունակում և հետեւալ գլխավոր մոմենտները.

1. Բառային մշակում.

2. Վանկային մշակում.

3. Հնչյունային մշակում:

Բառի սկզբնական մշակումը կատարվում է ալբրենարանի նլութից դուրս, վորից հետո բառութին մը-շակումը կարելի է կապել առաջին դասի բառերի հետ (վաճի, վարի): Հետագայում վանկի մշակումը կարելի յէ սկսիլ 2-րդ դասից (եջ 4), տառի - հնչյունի մշակումը 3-րդից (եջ 5), իսկ խոսքի մշակման կարելի յէ անդրադառնալ 4-րդ դասից (եջ 6):

Իրեկ ընդհանուր կանոն խոսքի մշակման համար պետք է ընտրել պարզ, սակայն լրիվ, բովանդակալի նոտիվադասություններ (Արան արտօ ունի). վանկի մը-շակման համար կարելի յէ վերցնել բաց (կա, նի, ըս...) և փակ (նան, րին, ըավ...) վանկեր, սակայն խուսափելով բաղաձաւնների կուտակումից (կալ-սող, տրակտոր, արտել, գրել և ալին): Հնչյունների մշակման

ժամանակ սկզբում պետք ե առաջնություն տալ ձայնավորներին (ի, ո, ու, ա), «տառը հանելով» բաց վաթկերից (ձախավորով վերջացող), որինակ՝ վարփ, վաթո, ու, արա և այլն):

Զեռագիրն սկսվում ե Երդ դասից (եջ 8), լեռք արդեն, նախորդ վարժությունների շնորհիվ, ունենք միքանի հնչյունատառ (ձերկօնքավագ), որինակ՝ արագրելու համար մենք նախորդ դասից հանել եյինք և ու տառերը, նույնը Փեա, արփ (եջ 11) և այլն:

Գրության ուսուցման տեխնիկան իր հերթին ունի հետևյալ մոմենտաները.

1. Արտագծում (зарисовка).

2. Զեռագրից գիտակցաբար արտադրելը.

3. Տպագրից գիտակցաբար արտագրելը՝ նախապես հատվող ալբրենից խոռոքեր կազմելով.

4. Հիշողությամբ գրելը (լսողական անալիզ).

5. Կարդացած գեղարվեստական նյութերի ազատ գրություն (շարադրություն) և հարցերի գրավոր պատասխաններ.

6. Գործնական գրությունների (ստացական, դիմում) կազմելն. ու գրելը:

Այլրենական շրջանում կարելի յե ոգտագործել այս ձևերից առաջին լեռեքը, ընթերցարանի շրջանում՝ վերջին լեռեքը:

Գրելու և կարդալու վարժությունների մեջ պետք ե պահպանել հետեւյալ քանակական փոխհարաբերությունը.—այլրենական շրջանում ուշագրությունը կենտրոնացնել կարդալու ուսուցման վրա, իսկ ընթերցարանի բաժնում՝ գրության ուսուցման վրա:

Այլրենական շրջանում թե գրելու և թե կարդա-

լու ժամանակ անհրաժեշտ ե ոգտագործել հատվող ալբ-  
րենը: Այս այբբենը 2 տեսակ ե լինում: — մեծ տառե-  
րով ընդհանուր դասարանական պարագմունքների  
համար: Այդպիսի այբբեն ծախվում ե առանձին՝ մե-  
ծագիր թերթերով: Զարելու դեպքում կարելի յե նկա-  
րել—գրել ստվարաթղթի (կարտոնի) վրա: Ցանկալի  
յե ունենալ թե ձեռագիր, թե ապագիր այբբեն: հա-  
կառակ դեպքում՝ առավելություն տալ տպագրին: Մյուս  
տեսակը՝ փոքրագիր—սովորողների անհատական գոր-  
ծանության համար՝ թե պարագմունքների ընթաց-  
քում՝ դասարանում և թե տանը: Այսպիսի այբբեն  
տրվում ե գրքում, առանձին թերթերով, վոր գործա-  
ծության ե դրվում հերթով, ըստ կարիքի: Ալբբենը  
պատրաստում են (կպցնում, կտրատում) սովորողնե-  
րը իրենք և պահում են դասարանում կամ հետները  
թերթում (կարելի յե պահել տուփերում): Մեծադիր այբ-  
բենը ցանկալի յե ունենալ՝ 1) ամբողջ թերթի վրա,  
պատին կպցրած, 2) սեղանի վրա՝ այբբենական կար-  
գով դարսած: Այս տառերից մեկական որինակ կպցը-  
նում են սեղանին կամ ամրացնում սեեռակով (կնոպ-  
կա). մյուս որինակները դարսում են սրանց վրա, վո-  
րով հեշտանում ե հարկավոր տառը գտնելը:

Շարժական այբբենն ոգտագործելու համար լավ  
կլինի դաստիանում ունենալ առանձին հենարան, վո-  
րի վրա դարսվում են տառերը՝ բառեր կազմելիս:  
Հակառակ դեպքում կարելի յե ոգտագործել դրատախ-  
տակի ներքեմի յեղերքը (պլանկա):

Աշխատանքների ընթացքում հատուկ ուշադրու-  
թյուն պետք ե դարձնել տառերը հանելուն: Բառա-  
լին և վանկային մշակումն, իբրև ընդհանուր կանոն,

կարելի յե կատարել հատուկ դասերում (1—2), սակայն հնչյունային մշակումն (տառեր հանելը) ավելի յերկարատև վարժություն և հմտություն ե պահանջում և դժվար ե յուրացվում։ Յեթե ինկատի ունենանք նաև այն, վոր այս կամ այն սովորողը կարող ե բացակայել դասերից և չմասնակցել հնչյունատառերի մշակման, վերջինս կրկնելու դեպքում նա հնարավորություն կունենա համենայն դեպք վերահսու լինել այդ աշխատանքներին։ Այսպիսի միքանի վարժություններից հետո կարիք չի լինի այլևս մշակել բոլոր հնչյունատառերը (տառ հանելը), այլ կարելի յե ուղղակի անվանել մշակվող տառը։

Բաղաձայնը հանելիս կարիք չկա այն միայն մի ձայնավորի հետ զուգորդել (թ-ի) և այդ զուգորդությունը (վը, նը և այլն) համարել հնչյունատառի անունը։ Յուրաքանչյուր բաղաձայն պիտի զուգորդել բոլոր վեց ձայնավորների հետ (վը, վի, վա, վու, վո, վե) բառավանկերում՝ սովորողի ուշքը սևեռելով այն հանգամանքի վրա, վոր չնայած ձայնավորների փոփոխության՝ մնում ե մի կայուն հնչյուն և—բաղաձայնը։ Այսպիսով սովորողը, առանց բաղաձայնին անուն գնելու, կկարողանա բաղաձայնի հնչյունն ու գիրը ճանաչել ե բոլոր հնարավոր զուգորդություններում կարդալ։

Բաղաձայնին, ինչպես և բոլոր հնչյունատառերին, կարելի յե անուն դնել միայն այդ բաղաձայնը բոլոր զուգորդություններում լավ կարդալ կարողանալուց հետո, վորպեսզի չինի թե սովորողը նոր կարդալիս ը-եր ավելացնի (վըանըի)։

Միքանի խոսք գրության մասին, Սկզբի դա-

սերին գըելն՝ իսկական մաքով՝ բացակալում ե. այս-  
տեղ, ինչպես ասվեց վերևում, արտազծում են գիրը  
(«նշանները») տպագրին մոտեցնելով։ Հնչունները  
հանելուց հետո անցնում են ձեռագրին, վորը լինելու  
յե պարզ, զատ-զատ (չմիացրած) տառերով։ Ձեռագի-  
րըն ընդհանուր առմամբ շատ չի տարբերվելու. տպա-  
գրերից։

## ՀԱՇԻՎԸ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Այբբենական շրջանում մաթեմատիկական գրա-  
գիտությունը սահմանափակվում է թվարկությամբ և  
բանավոր հաշվով։ Վերջում, ըստ սովորողների առա-  
ջադիմության, կարելի յե անցնել գրավոր հանման և  
գումարման գործողություններին։

Այբբենական շրջանում կարելի յե մտցնել նաև  
համրիչի գործածությունը, վորը լավ դիտողական  
(իրազննական) միջոց է թվարկության ուսուցման։

Հաշիվը պետք է կապել գրագիտության նյու-  
թերի հետ, պահպանելով կոմպլեքսացման սկզբունքը։  
Այս բանն առանձնապես չի հաջողվել կիրառել դասա-  
գրքում, վորտեղ մաթեմատիկական նյութերը չեն մը-  
շակված և մեծ մասամբ մեքենական կապ ունեն կար-  
դալու նյութի հետ։ Մաթեմատիկական նյութը գրքում  
բաշխված է հետևյալ կերպ։

Եջ 8. 1—5 թվարկություն, վոր կարելի յե կա-  
պել նյութերի հետ։

Եջ 11. 6—10 թվարկություն, վոր կարելի յե  
լեզրակացնել բառերի քանակի, տվյալ դասի №-ի  
(7-ըդ) հետ և այլն։

Հետադա դասերում (եջ 25, 29, 42) բերված մա-  
թեմատիկական տարրերն ուստաղործելու համար ան-  
հրաժեշտ ե մինչ այդ նախորդ դասերի մեջ բաշխել և  
սրանց հետ կապակցել առնվազն հետեւալը.

Թվարկություն 1—100, սկզբում տասնյակներով,  
ապա անխտիր յերկանիշ թվերով:

Հաշվել պարզ անվանական թվեր՝ 5 կիլո, 10  
մետր և այլն: Բարդ անվանական թվերից՝ ոռուք. և  
կոպ., ֆաղափար տալ  $\frac{1}{4}$ -ի և  $\frac{1}{2}$ -ի մասին՝ գործնական  
նպատակներով, որինակ՝ կիլոն=2 $\frac{1}{2}$  գրվ.,  $\frac{1}{4}$  մետր  
և այլն:

Վորոշ թվերով (0 և 5-ով վերջացող կամ 2-ի  
բաժանվող) գործողություններ կարելի յե կատարել  
բանավոր. որինակ՝ «կոռոպերատիվ» (եջ 35) հոդվածից  
հետո կարելի յե բանավոր հաշվել՝

1. պանրի գնի տարրերություն մասնավորի մոտ  
և կոռպ.-տիվում (10 կոպ.).

2. 1—5 կիլո պանրի արժեքը մասնավորի մոտ  
և կոռպ.-տիվում.

3. ի՞նչքան կոգտվեր արտելը 50 կիլո պանրի  
վաճառքից կոռպերատիվին և այլն:

Բանավոր հաշիվը կարելի յե կապակցել համարյա  
բոլոր հոդվածների հետ. որինակ՝

1. Տեքստիլ գործարանի (եջ 26) մասին պար-  
զել բանավորների քանակը (մի ցեխում), յերեխաների  
քանակը դպրոցում և մսուրում, արտադրած կտավի և  
գուլպաների քանակը, արժեքը. պարզ խնդիրներ այս  
տվյալներով և այլն:

2. Եջ 28. խոտհարի և ձեռքի արտադրածի համե-  
մատություն.

3. Եջ 37. 40 և 41 դասերի հետ` ժամացույցը, շարաթվու որերն ու տարվա ամիսները (քանակը, կարգը) և այլն:

Հաշվի նյութը կարելի յէ վերցնել նաև շրջապատից, գլուղի խրճիթի, դյուղիսորհրդի, կոլանտեսութիւն, կոռուպերատիվի տվյալներից, լրագրերից, առորյա անցուդարձից, սովորողների անձնական կլանքից ու տնտեսութիւններից և այլն:

## Դ Ա Ս Ա Ն Ո Ւ Թ Ա Խ Ա Կ Ա Ր

(Ներածական դաս)

Դասի նպատակը

Զրույցի և շարժական այբբենի միջոցով դադարիար տալ խոսքի և բառի մասին. «Վանի վարի» խոսքի մշակումը:

Դասի ծրագիրը

1. Զրույց: Գաղափար խոսքի և բառի մասին:
2. Համառոտ զրույց այբբենարանի առաջին նըկարի շուրջը (Եջ 3): «Վանի վարի» խոսքի կարդալն ու արտագծումը:
3. «Վանի վարի» խոսքի մշակումն՝ ուղիղ և հակադարձ:

Դասի ընթացքը

Դասի սկզբում դասատուն բացատրում ե, զոր կարդալու և գրելու համար պետք ե սովորել—տարբերել բառերը: Խոսքի բաղկացուցիչ մասերին՝ բառերին ծանոթանալու նպատակով դասատուն վերցնում ե զոր-

ևել լրագիր, վոր հայտնի յե սովորողների մեծամասնությանը, որինակ՝ «Մաճկալ», «Խորհրդային Հայաստան», «Հայաստանի աշխատավորունի» և ալլն։ Դասաստում, ցուց տալով լրագիրը, հարցնում ե. «Ե՞նչ ե իմ ձեռքին»։

Պատասխան. «Լրագիր ե»։

Դասատու. «Գուցե զիտե՞ք, թե ինչ լրագիր ե»։

Պատասխան. «Խորհրդային Հայաստան»։

Դասատու. «Մենք ասացինք, վոր այս լրագիրը կոչվում ե «Խորհրդային Հայաստան»։ Հապա մտածենք—քանի բառից ե բաղկացած այս. հապա լսեցեք՝ «Խորհրդային Հայաստան»։

Եեթե դուրձիալ դժվարանում են, կարելի յե նորից կրկնել, մատերի կամ վոտքի թխկոցով (տակտ) կամ, վերջապես, պայմանավորվել, վոր յուրաքանչյուր մասը նշանակում ե գծիկով՝ գրախտակի վրա. արտասանում ե—Խորհրդային Հայաստան, գծում ե գրախտակին։

Դասատու. «Հիմա իհարկե կանեք՝ քանի մաս ե»։

Պատասխան. «Յերկու»։

Դասատու. «Խոսքի մասին ասում են բառ. ուրեմն քանի՞ բառից ե բաղկացած «Խորհրդային Հայաստան»։

Պատասխան. «Յերկու բառից»։

Դասատու. «Ասա առաջին բառը»։

Պատասխան. «Խորհրդային»։

Դասատու. «Իսկ յերկրորդ բառը»։

Պատասխան. «Հայաստան»։

Այսպիսով սովորողները յեղրակացնում են, վոր խոսքը բաղկացած ե բառերից։ Սակայն այս մի որի-

նակը բավական չե: Պետք ե չարունակել խոսքի վերալուծումը՝ լսողությամբ, վորոշ հաջորդականությամբ (յերկու, յերեք, չորս բառերից բաղկացած):

Այնուհետև պետք ե շեշտել նաև այն, վոր գրքերում, լրագրերում, նամակներում նույնպես կան խոսքեր, վոր այդ խոսքերը գրված են, ոպված:

Այնուհետև դասատուի ոգնությամբ արվում ե հետեւյալ ընդհանուր յեղրակացությունը՝

Մեր միսին արտահայտում ենք խոսքերով. այդ խոսքերը մենք ասում ենք, գրում (նամակում), ոքագրում (գրքում, լրագրում): Խոսքը բաղկացած ե բառերից:

Ցուց տալու համար, թե ինչպես են գրում բառերը, կարդացվում ու հաշվում, կարելի լե սովորողներին առաջարկել խոսքեր ասել. այդ խոսքերը գրում ե այնպես, վոր նկատելի լինի: Այնուհետև սովորողների հետ հաշվում են բառերը:

Այնուհետև պետք ե ստուգել՝ ինչ չափով յուրացրել են այս բոլորը: Այս նպատակով սովորողներն իրենք ասում են (շարադրում են) խոսքեր և հաշվում, կարձյալ աստիճանաբար՝ 2, 3, 4 բառերից բաղկացած: Ցեղեա այս վերջին վարժությունները հաջող են անցնում, նշանակում ե՝ դասի առաջին մասը կարելի լե վերջացած համարել: Հակառակ դեպքում պետք ե վարժությունները շարունակել:

Սրանից հետո սկսում են անմիջապես տպագրին (տպագիր խոսքին) ծանոթացնելու աշխատանքները՝ ողտվելով «Դեպի կոմունա» գրքի Յ-րդ յերեսում բերված ամբողջական բառերից: Բառապահերների յուրացումը պետք է կատարվի այնպես, վոր նրանց օք-

պավորվելու պրոցեսում մասնակցեն ըստ հետրավորության ավելի շատ զգայարաններ:

Մենք պետք ե աղդենք տեսողության, ապա լըսողության և, վերջապես, շարժողության վրա. այսինքն՝ սովորողները պետք ե տեսնեն բառը, ապա լըսունն և վիրջում՝ գրեն (նկարեն), Ալտեղ մեզ մեծ ծառայություն կարող ե ցույց տալ շարժական այրբենը:

Հետագա աշխատանքն ունի իր ուրուն բնույթն ու ընթացքը և ներկայացնում ե մոտավորապես հետեւյալ պատկերը:

Դասն սկսվում ե զրուցով նկարի շուրջը (եջ 3): Սկսելով վարի նկարագրությունից, նշանակությունից, ձևերից և միջոցներից, յեզրակացնում ենք (պայմանականորեն), վոր վարում ե Փանին: Դաստուն ցույց ե տալիս հատվող այրբենից (մեծադիր) նախապես կազմած և թղթի շերտի վրա կպցրած խոսքը (տպագիր):

### Վանի վարի

Դաստուն կարդում ե այս խոսքը դանդաղ ու վորոշակի, ցույց տալով յուրաքանչյուր բառը: Առաջին դասերին այս անհրաժեշտ ե, վոր սովորողներն ընտելանան բառի և խոսքի տեսողական ճիշտ պատկերացումներին՝ կարդալով ձախից աջ: Այնուհետև աշակերտները դաստուի հետ միասին խմբով կարդում են նույնը, վորից հետո դաստուն առաջարկում ե կարդալ նույնը անհատորեն: Յերբ դաստուն համոզվում ե, վոր բոլորը ճանաչեցին ու հիշում են խոսքը,

սովորողներին առաջարկում ե գտնել այն այրբենարանում և խմբով կարդալ։ Այսպիսով կատարվում ե ամբողջական խոսքի յուրացումը (ըմբռնումը)։ Այնուհետև խոսքը վերլուծվում ե բառերի, Դասատուն կարդում և խոսքը հատոհատ բառերով և հարցնում ե.

«Թանի՛ բառ կարդացի»։

Պատասխան։ «Յերկու»։

«Վմրն ե առաջինը, յերկրորդը»։

Պատասխան։ «Վանի, վարի»։

Դասատուն կիսում ե թղթի շերտը և հարցնում առանձին բառերը. պատասխանում են. նույնը կատարում են աշակերտները, հնչելով յուրաքանչյուր բառը առանձին։

Այնուհետև դասատուն տեղափոխում ե բառերը, և ստացվում ե հետեւյալ պատկերը

### Վարի վանի

Կատարվում ե նույն աշխատանքը. կարդում են ամբողջ խոսքը, վերածում են (կտրում) բառերի. Նույնն անում են աշակերտներն՝ իրենց տրված շերտերով։

Մրան հետեւում ե դասի յերրորդ շրջանը՝ արտագծումը, Դասատուն նախ ինքն ե նկարում բառը զըրատախտակի վրա, ապա աշակերտները, հետեւյալ նրան, արտադժում են\*):

\* Ա. Զղոբովը («Методика обуч. грамоте»—1929г.) աս-

Ալսպիսով՝ յուրացվում ե խոսքը տեսողական, լսողական և շարժողության զգալարաններով:

Զուտ գրադիտության ուսուցման պրոցեսում այս դասն ընդգրկեց յերկու մոմենտ.

Գեղուծումն (անալիզ) — խոսքը վերլուծվեց բառերի (վանի-վարի):

Նամազում (աինթեզ) — «վարի» և «վանի» բառերից կազմվեցին խոսքեր — «վանի, վարի», «վարի վանի»:

## ԴԱՍ № 2

### Դասի նպատակը

Վանկի ծանոթություն:

### Դասի ծրագիրը

1. Նախորդ դասի համառոտ կրկնություն:
2. Համառոտ զրուց-կրկնություն նկարի շուրջը:
3. «Վաղ» բառի մշակումն:
4. «Վանի վաղ վարի» խոսքի մշակումն՝ վանիկերի բաժանելով: Մշակվող խոսքի և բառերի նկարելը:

Լիս ե գրության հետեւյալ յեղանակները, վոր կարելի յե ինկատելունենալ նաև «արտագեելու» զբանում:

1. Դաստառուն գրում ե գրատախտակի վրա խոշոր, պարզ տառերով.
2. Առաջարկում ե հետեւյալ՝ ինչպես ե ինքը գրում.
3. Գրում ե միքանի անգամ, ապա առաջարկում արտագրել.
4. Աշակերտները գրում են մատիտով, նույնպես խոշոր տառերով (գրատախտակից կամ գրքից).
5. Գործածել Յ գեանի տեարեր (մանավանդ սկզբում).
6. Ուսուցիչը հետեւում է, վոր ճիշտ գրեն, ամեն մի տառ սկսելով սկզբից գրել (որինակ՝ ատառն սկսել ձախ կողմից, վերից ներքեւ, ի-ն նույնպես, նախ գիծը, ապա՝ կեռը և այլն).
7. Բառը գրել Յ—է անգամ:

5. «Զըռույց՝ վանկին ծանոթացնելու նպատակով։

6. «Վանի վաղ վարի» խոսքի վանկելը և «վա, նի, ըի, վաղ» վանկերի մշակումը։

### Դասի քննացք

Դասի սկզբում համառոտ կերպով վերհիշում են նախորդ զըռույցը—խոսքի վերլուծման մասին՝ բառերի։ Կարդում են նախորդ դասից՝ վանի, վարի բառերը։ Այնուհետեւ, դիտելով նկարը (եջ 4), խոսում են վաղ վարելու անհրաժեշտության մասին՝ հաշվի առնելով տեղական պայմանները։ Այնուհետեւ դասատուն ցուցադրում ե շարժական տառերից կազմված (թղթի շերտերի վրա) խոսքը—

վանի վաղ վարի
---------------

Կարդում ե նախ դասատուն, ապա աշակերտները։ Կատարում են սովորական վերլուծում բառերի։ Այս բանը դյուրանում ե նրանով, վոր տվյալ խոսքի յերկու բառերն արդեն ծանոթ են սովորողներին։ Բառերը նկարում են նախ գրատախտակի վրա, ապա՝ տետրերում։

Այնուհետեւ սկսվում ե բառերի վերլուծումը՝ վանկերի։

Դասատուն վերցնում ե վանի բառը և արտասահում ե վանկերով (վանի), առաջարկելով հետևել՝ քանի հատվածով ե արտասահում։ Անհրաժեշտ դեպքում չափ ե տալիս (տակտ) վոտքով, ձեռքով կամ քանոնով։ Պարզելով, վոր այդ բառը յերկու մասից ե բաղկացած, դասատուն կտրում ե բառը (թղթի շերտի

վրալի) և բաժանում յերկու մասի: Նույնը կատարում են աշակերտները:

Կարելի յե նաև այսպես անել. դասատուն ասում ե վանկի առաջին մասը (վա), մյուս մասն ասում են սովորողները. ստացվում ե ամբողջ բառը՝ վա նի: Նույն ձեռվ մշակում են վա րի բառը, իսկ վադ վանկը արտասանում են ամբողջությամբ: Յեթե դժվարությամբ են լուրացնում, շարունակում են վարժությունները՝ լսողությամբ վերցնելով յերկվանկանի, յերեք վանկանի այլ բառեր (մա-տա-նի, պա-պի և ալլն):

Պետք ե հետեւել, վոր սովորողները հիշեն հանած վանկերը (վա, րի, նի): Այս պատճառով ել պետք ե հիշյալ վանկերը զրել և կարդալ՝ խառն կարգով և սրանցից բառեր կտղմել: Այսահեղ սկսվում ե համադըման (սինթեզ) պրոցեսսը:

Այսպիսով վանկերի մշակումը ևս ունի յերկու մռմենու:

Վերլուծումն (անալիզ) — բառը բաժանում ենք վանկերի:

Համադըման (սինթեզ) — վանկերից կազմում ենք բառեր: Այս դեպքում տվյալ 3 վանկերից անհնար և կազմել նոր բառեր (ստացվող նոր կոմբինացիաներն անիմաստ բառեր են — ըինի, ըիվա, նիրի, նիվա, — վորոնցով չարժե զբաղեցնել, սակայն հետազա դասերում այսպիսի վարժությունների լայն հնարավորություններ կան:

Համադըման վարժություններ կատարելու համար դասատուն հիշեցնում ե մշակած բառերն ու վանկերը (վանի= վա-նի, վարի= վա-րի): Հարցնում ե առաջին բառի (վանի) վանկերը: Առաջարկում ե գըտնել առաջին վանկը (վա): Այդ վանկը դնում են գրա-

տախտակի կամ հենարանի վրաւ Հարցնում ե յերկ-  
րորդ վանկը (Եի): Գտնում են: Ասածարկում ե դնել  
առաջին վանկի աջ կողքին. ստացվում ե՝ վանի:  
Ամբողջ բառը կազմելուց հետո հարցերով վերլուծում  
են վանկերի (Վա. Եի): Կըկնում են նույնը վարի բա-  
ռի նկատմամբ: Կարդում են յերկու բառն ել խմբով,  
ապա նկարում են: Ապա կարդում են այբբենարանի  
4-րդ լիլեսի նույնը, խմբով և անհատութեն: Կարդում  
են զիտակցաբար: Խմբով կարդալիս ղեկավարը կար-  
դում ե հետները, իսկ սովորողները կարդացած ցույց  
են տալիս մատիտով կամ մատով:

### ԴԱՍ Հ Յ Յ

#### Դասի նպատակը


Հնչյունատառի ծանոթություն («տառ հանելը»):

#### Դասի ծրագիրը

1. Նախորդ դասի համառոտ կրկնություն:
2. Համառոտ զրուց նկարի շուրջը:
3. «Որի վաղ վարի» խոսքի մշակումն՝ վերլու-  
ծելով բառերի, բառերը վանկերի, վանկերից նոր բա-  
ռեր կազմելով:
4. Այբբենարանի ընթերցում. Ի տառի հանելը.
5. Նկարել մշակած բառերը, վանկերն ու խոսքը:

#### Ներածություն

Աշխատանքի յերրորդ ետապն ե (ըստ ուսուց-  
ման այս մեթոդի) հնչյունատառի մշակումը (տառ հանելը), հանած տառերի հիշելը (ճանաչելը)՝ վանկերում  
և բառերի մեջ:



Հնչյունային մշակումը կատարվում ե ամբողջ ալբքենական շրջանում և մեծ կարևորություն ունի: Խոսքի, բառի ու վանկի մշակումը հնչյունային մշակման նախապատրաստական վարժություններ ե հանդիսանում: Այս վարժությունների ընթացքում, յերբ սովորողն արդեն կարողանում ե տարբերել բառի միջի հնչյունները և նշանակել այն համապատասխան տառերով,—նշանակում ե՝ զլխալոր գործն արդեն արված ե և առաջին հերթին զրել-կարդալն ապահովված է: Ինչպես ասվեց վերևում, ըստ վերլուծական-համադրական մեթոդի ձայնավոր տառը հանում ենք բաց վաճկերից (րի, վա, զո...), իսկ բաղաձայնները՝ բառի վերջից կամ սկզբից, նայած վորտեղ ե բաղաձայնն իր բնական հնչյունով արտասանվում: Ակզրի շրջանում ձայնավորը կարելի յե հնչել նաև առանձին, անկախ բառից:

### Դասի քննքցք\*)

... Կապտկցելով նյութի հետ, դասատուն ցուցադրում ե «որի վաղ վարի» խոսքը (տպագիր): Նույնը կատարում են սովորողներն՝ իրենց տառերով: Սովորողները կարդում են, նկարում են այդ խոսքը և այլն: Դասատուն փոխում ե բառերի դասավորությունը, որինակ՝ «վաղ վարի որի», կարդում են, նկարում: Այնուհետև սկսում են բառերը վանկերի բաժանել: Դասատուն կարդում ե ընդհատումներով, յերկարացնելով ձայնավորները—Ռ-րի՛, վա՛-րի՛, Առաջար-

\*) Տալիս ենք համառոտ, առանց կրկնելու ծանօթ մոմենտները (կրկնություն, զրույց), կանգ առնելով միայն նոր մոմենտի վրա (տառ հանելը):

կում և անվանել վանկերը։ Կիսում ե բառերն ու առաջարկում կարդալ վանկերով։ Նկարում են վանկերով։ Դասատուն տուաջարկում ե կարդալ այբբենարանի ծ-րդ յերեսում վերջին տողը (Որի, վաղ վարի)։ Դասատուն բարձր ձայնով արտասանում ե վարի բառը՝ վերջի ի՞ն յերկարացնելով, և առաջարկում ե գտնել՝ ինչ ե լըսվում վերջը։ Սովորողները գտնում են, հնչում են ի՞ ի՞։ Դասատուն ցույց ե տալիս ի տառը, փոքրատառ և մեծատառ և առաջարկում ե գտնել ծ-րդ յերեսի բոլոր բառերում։ Այնուհետև բի վանկը միացնում են այլ վանկերի և ստանում նոր բառեր։ Վարի, որի, արի և այլն։

Այսպիսով սովորողները յուրացնում են ի հնչյունատառը—կարդում են վանկերում, բառերում։ Կարելի յե ծանոթացնել նաև ի տառի գրության։

Դասի մնացած մասը կրում ե նախորդ աշխատանքների բնույթը։ Կարդալ ծ-րդ յերեսի տեքստը, Հարկ յեղած դեպքում բացատրել բառերը, վերլուծել խոսքերը բառերի, կազմել նոր խոսքեր նույն բառերից և այլն։

Նույն ձեռվ կարելի յե այս դասից հանել ո՞ն:

## ԴԱՍ Հ 4

### Դասի ծրագիրը

1. Անցյալ դասին մշտկած նյութի կրկնություն։
2. Նկարի ծանոթություն։
3. «Արան ու նինան արոր ունին» խոսքի մշտկում։ նոր վանկերի յուրացում—բան, ելին, նան, բոր, ուր,

4. Մշակած խոսքերի, բառերի ու վտնկերի նկարելը:  
5. Եղդ լերեսի նլութի ընթերցումն:

**Դասի ընթացքը (համառուսած)**

Դասատուն ցուցադրում և թղթի շերտի վրա  
կպցըրած—

**Արան ու Նինան արոր ունին**

Կարդում և բարձր, բառերը մեկ-մեկ ցույց տալով. այնուհետև կարդում են սովորողները, մեկ-մեկ և խմբով։ Դասատուն նկարում և գրատախտակի վրա, աշակերտները՝ աետրերում։ Ղեկավարը կրկնում և այդ խոսքն ու հարցնում. —քանի՞ բառ ե... Պատասխանում են։ Վերն և առաջինը, յերկրորդը և այլն։ Տեղափոխում են բառերը, նորից կարդում։

Այնուհետև ամեն մի բառը բաժանում են վանկերի, տռանձին ցուցադրում վանկերը, միացնում նոր վանկերից (տես ծրագրի § 3) կարելի յե կազմել հետեւալ բառերը՝ ունին, Ունան, իսկ հների հետ՝ ավելի շատ նոր բառեր։

Դասատուն նորից կրկնում և մշակվող խոսքն ամբողջությամբ կամ մասամբ («արոր ունին» կամ «Արան ու Նինան»), ցուցադրում և գրատախտակի կամ հենարանի վրա։ Սովորողները կարդում են։ Դասատուն արտասանում և միայն մեկ բառը, վորից նպատակահարմար և հանել և տառը, որինակ՝ Փառան, Նիթան կամ ութին։ Հարցնում ե՞ ի՞նչ և լսվում բառի (յենթագրենք՝ Փառան) վերջում։ Յեթե սովորողները պատասխանում են՝ և, դասատուն ցուցադրում և և

տառը՝ մեծատառ և փոքրատառ և ասում ե, վոր ալսպիս են նկարում և հնչյունը (Յ հնչյունի պատկերը, կամ Յ տառ): Այնուհետև վերլուծում են «Արան» բառը, հատկապես բան վանկը, վորտեղ բա—ծանոթ վանկ ե (նախորդ դասից), իսկ վերջին տառն ե՝ Յ. դասատուն առաջարկում ե այս տառը գտնել վերլուծվող խոսքում («Արան ու Նինան արոր ունին»), բառերում և վանկերում, նաև գրքի Յ-րդ յերեսում:

Ցեթե դասատուն հնարավոր ե գտնում շարունակել աշխատանքը, նույնպիսի վարժություններ ե կատարում Յ-րդ յերեսի ուրիշ բառերի վրա, վորոնց մեջ կա վերջում և տառը (ու-նան, վա-նին և այլն):

Այս վարժություններից հետո կարելի յե կարդալ վանկերը, նկարել տետրերում և այդ վանկերից նոր բառեր կազմել. որինակ՝ Յ-րդ յերեսի տարրեր վանկերից (օւ, նան, ա, բի, վար, բա, վազ, բալ, նա, նի, բան, ո, բին և այլն) կարելի յե կազմել նոր բառեր—անի, ավար, նանի, ավազ, և այլն: Այս վանկերի մի մասը ծանոթ ե նախորդ դասերից:

## ԴԱՍ Հ 6

### Դասի ծրագիրը (համառութած)

1. Նախորդ դասի համառութած կրկնություն:
2. Այբբենարանի Յ-րդ եջի նյութի կարդալը (ամբողջը կամ Յ տողը):
- \*3. Նոր վանկերի լուրացում և Յ հնչյունատառի հանելը: Մանոթություն շեշտի (')\*):

\* ) Ստորակեաին ծանոթացել են Յ-րդ դասին, իսկ վերջակետին՝ Յ-րդ կամ Է-րդ դասերին:

\*4. Կարդալ այբբենարանի վերջին 2 տողը (դասի լեռնորդ կեսին):

\*5. Զեռագրի ծանոթություն—Արա բառի գրելը:

\*6. Մաթեմատիկական գրագիտություն—1, 2, 3, 4, 5 թվանշանների գրելն ու կարդալը:

**Դասի քննացք (նոր խնդիրների)**

§ 3-ից. Պարզաբանելով Յ-ըդ տողի իմաստը՝ դասատուն ասում ե, վոր մենք կարգադրում կամ հրամայում ենք Վաղովին և Գարոյին, վոր ցանեն: Ապա բացատրում ե, վոր այսպիսի գեղքերում, լերը կանչում ենք, դիմում կամ հրամայում մեկին, այդ բառի (ձայնավորի) վրա օհօս ե դրվում: Ցեթե կա, ցույց ե տալիս շեշտը տպագրական նշանով, ցեթե վոչ, զրում ե գրատախտակի վրա: Աշակերտներն արտագրում են այս տողը մաս-մաս (գրքից կամ ցուցադրած բառից) և դնում են շեշտը—

<b>Վաղո՛, վարի՛</b>	<b>Գարո՛, ցանի՛</b>
---------------------	---------------------

§ 4-ից. Վերլուծելով նախավերջին տողը՝ կանգ են առնում Արա բառի վրա: Այս բառը վերլուծում են վանկերի և ապա հնչյունների: Այս առաջին դեպքն ե, լերը բառն ամբողջությամբ վերլուծվում ե հնչյունների, և հնարավոր ե այդ անել, քանի վոր նախորդ դասից մենք հանել ենք ա և բ տառերը: Վերլուծումից հետո կարելի յե ա և բ տառերը համադրել և ստանալ Արա:

§ 5. Այնուհետև ղեկավարը բացատրում ե, վոր մենք մինչեւ այժմ բառերն ու նշանները (տառերը)

Յկարում ելինք, այժմ գրելու լենք։ Գրատախտակին զրում և Պար բառը՝ դանդաղ, խոշոր ու պարզ։ Աշակերտները հետեւմ են. դասատուն բացատրում ե դառերը գրելու իհղանակը (սկսելու տեղը, մասնիկների մեծությունը, դասավորությունը և այլն), ձեռադիր տառերը համեմատում ե տպագրերի հետ նույն Պար բառում և այլն։ Աշակերտները կարդում են գրածն, իրենք ևս համեմատում են ձեռագիրն ու տպագիրը (Պար բառը և առանձին տառերը), ապա գրում են տետրերում։ Գրելու ժամանակ դասատուն անցնում ե աշակերտների մոտ, ուղղում ե, ցուցմունքներ տալիս։ Գրում են 3—4 անգամ, ապա կարդում տետրերում գրածը։

§ 6. Դասատուն հիշեցնում ե (նախորդ դասերից),  
վոր՝ Վաղոն վարել և 1 որավար.

Իվանը	»	»	2	»
Վանին	ունի	3		»

Արան	ու	Նինան	4	»	վար արին,
------	----	-------	---	---	-----------

և պայմանագրվում են գրել (միայն թվանշանները), թե ով ինչքան ե վարել։ Այսպիսով կարգով զրում են 1, 2, 3, 4, 5 թվանշանները։

Իհարկե նախ ինքը դասատուն ե գրում նույն ինչպահակով (դանդաղ, խոշոր, պարզ), ապա գրում են աշակերտները։

Հատկապես թվերի (1—5) գործածության նպատակով կարելի յե հատվող ալբրենից կազմել խոսքեր և կարդալ վանկերի վերլուծելով ու հաշվելով վանկերը։

Վանին 3 ո-րա-վար ունի

Արան ու Նինան և ո-րա-վար վար ա-րին։

Այս վարժությունները պետք ե տպագրով կազ-

մեր, քանի վոր ձեռագիր չեն իմանում (բացի ա, բտառերից): Նկարել նույնպես ավելորդ ե, վորովհետեւ ալս դասից արդեն ծանոթացել են ձեռագրին և հետագալում շարունակելու յեն ձեռագրով գրել:

Թվերի ծանոթությունը կարելի է կատարել նուև իրենց առորյա կյանքից վերցրած նյութի վրա: Ո՞վ քանի կով, սենյակը, յերեխա ունի, աշխատողների քանակն ընտանիքում, քանի ո՞ր ե՞ւ դպրոց են հաճախում և ազն: Բոլոր դեպքերում ել գրում են միայն թվերն (1—5)՝ առանց բառերի:

## ՀԱԶՈՐԴ ԴԱՍԵՐԸ

Առաջին 5 դասերում (1, 2, 3, 4, 6) մենք ծանոթացրինք հետեւալ դլխավոր խնդիրներին, իրրե նըմուշ.

1. Ներածություն՝ խոսքի բաղկացուցիչ մասերի վերաբերմամբ.

2. Խոսքի մշակումը,

3. Բառի                  »

4. Վանկի                  »

5. Հնչունատառի » (տառ հանելը), ձայնավորի և բաղաձայնի.

6. Ձեռագրին անցնելը,

7. Թվանշանների գրություն.

8. Կետագրության ծանոթություն.

9. Անցածի կրկնություն, դրույց, նկարի դիտություն, շարժական տառերի գործածության չիդանակը և այլ մեթոդական ձևեր ուսուցման ընթացքում:

Տեղի սղության պատճառով և ընդհանուր (վերոհիշալ) մոմենտները չկրկնելու համար բավականանում ենք թվելով այն խնդիրների մշտակումը, վորկաբույ են հանդիպել հետազա դասերում։

Այդ խնդիրներն են՝

1. Յերկնից և յեռանից թվերի գրություն (զբույլ և առանց զրոյի)։

2. Յեռահնչյուն վանկերի մշտակումն։

3. Ծանոթություն հոռմեական թվերին։

4. Ամսի, ամսաթվի և դասի հետի գրություն՝ լըրիվ և կրճատ։

5. Տպագրից արաագրություն։

6. Ժամանակի, ծանրության չափերի, ոռւբլու և կոռեկի ծանոթություն։

7. Խոսքի գրություն՝ հիշողությամբ։

Որինակները վերցնում ենք դասերից, վորտեղ շոշափելում են հիշյալ հարցերը։

## II Թերեանիօ յեզ յեռանիօ քվերի գործածություն

«Արտելի վոչխարները» (եջ 29) դասից։

Թվերը (14, 24) կարելի յե գրել գրատախտակին, տետրերում։

Գրելուց առաջ դաստիպուն բացատրում ե, վորայդ թվերը բաղկացած են տասնյակներից և միավորներից՝ (10+4, 20+4) ինչպես այդ տեսնում ենք արտասանությունից (տաս-չորս, քսան-չորս)։ Այդ պատճառով ել գրում 1,2 տասնյակ և կողին՝ 4,4 միավոր։

Բացատրել, վոր յերբ վերցնում ենք կլոր (լրիվ) տասնյակներ, տասնյակի կողքին գրում ենք զրո (20, 30, 40....)։

Յեռանիշ թվերը գործածում ենք ընթերցարանի բաժնում (եջ 67, 69 և ալին) և գործնական զրությունների տակ (տարեթիվ): Նույն յեղանակով պետք է բացատրել նաև յեռանիշ թվեր գրելու և կարդալու կարգը:

### 2. Յեռահենյուն վանկերի մօակումն

Յեռահենչուն վանկեր մեզ հանդիպում են սկսած 3-րդ դասից: Սակայն այդ վանկերը կամ ամբողջական բառեր են (եջ 5—վար, վաճ) կամ բառի վերջին մասն են կազմում: Այս վանկերի մշակումը կարելի յե հետաձգել: Սակայն ավելի դժվար ե, յերբ բազմավանկը բառի սկզբում կամ միջում ե հանդիպում (եջ 17—տրակ-սոր, եջ 18—կալ-սող և այլն): Այդպիսի դեպքերում ցանկալի լե զատել բառի իմաստալի մասը և մշակել առանձին (կալ-սող, բաճ-վոր և այլն):

### 3. Հոռմեական թվերի գործածություն

Յեթե առիթ չի լինի ավելի վաղ անցնելու, հոռմեական թվերի գործածությունը կարելի յե կապել «Խաղիո» հոդվածի (եջ 40) մշակման հետ: Դասառուն բացատրում ե, վոր հոռմեական թվերը գործածում ելին հին ժամանակներում, այժմ հանդիպում ենք ժամացուցյների վրա, որացուցյներում և գրքերում (հաշիվ կամ կարգ ցուց տալու դեպքում): Ամիսների կարգը կարելի յե նշանակել հոռմեական թվերով (հունիս՝ VI, մարտ՝ III...):

4. Այս դասին կից կարելի յե անցնել նաև ամսի յեզ ամսաքի գրությունը (հոկտեմբերի 25 կամ 25-ին) կրծատ անցնելու դեպքում կարելի լե գրել հոկտ. 25

կամ որտագործել հռովմեական թվերը՝ 25/Х, 1/V և  
ալլն). Դասերի կարգը կարելի լե գրել նույն կերպ—  
դաս 6, դաս VIII և ալլն:

### Յ. Տպագրից արտագրություն

Տպագրից արտագրություն տալը կարելի լե չըշ-  
տապեցնել Համենայն դեպս լավ կլինի առաջին 7-8  
դասերին արտագրել ձեռագրից (զբքից կամ գրատախ-  
տակից). Առաջին անգամ տպագրից արտագրելիս ցան-  
կալի լե միտժամանակ տալ նաև նույնը՝ ձեռագիր։  
Այսպիսի ս շիստանք հնարավոր ե սկսած 17-րդ եղից։

### Կոմունան տրակտոր ունի

#### Կոմմունան տրակտոր ունի

Նման որինակներ կան նաև 23, 24 և հետագա դա-  
սերում։ Տպագրից արտագրելիս պետք ե արտագրել  
ամբողջ բառերով, դժվարանալու դեպքում—վերլու-  
ծել վանկերի։

### Զ. Զափերի ծանոթ են սովորողներին գործնական

կյանքից։ Այս գրքում չափերի մասին գաղափար կա-  
րելի յե տալ հենց սկզբի դասերից (2, 4 որավար, մի  
կիլո, 80 կոպեկ և ալլն)։ Զափերի մանրամասն ծանո-  
թության յեղանակներն ու հաջորդականությունը,  
գործնական խնդիրներ կազմելը՝ մաթեմա-  
տիկական գրագիտության մեթոդիկայի խնդիրե։ Բարդ  
հաշվի դեպք ընթերցարանում հանդիպում ենք միայն

«կովի խնամքը» հողվածում (եջ 68-69), վոր պետք և լուծել գործնականորեն՝ կլորացրած թվերի և բանավոր հաշվի միջոցով:

### 7. Խոսքի գրություն հիօնողությամբ

Այսպիսի աշխատանք կարելի յետ տալ այն ժամանակ միայն, յերբ սովորողները կանոնավոր (բառն ամբողջությամբ) կարողանում են արտագրել տպագրից, Գրությունն սկսվում ե ալբրենի տառերեց կաղմած խոսքերից, վոր ցուցադրում ե դասատուն։ Որինակ՝ յեթե նա ուզում ե հիշողությամբ արտագրել տա (եջ 32) —

### Դարբին Սողոն շատ բան ե անում,

ամբողջ խոսքը կտզմում ե հատվող ալբրենի տառերից և շտրում գրատախտակի կամ հենարանի վրա։ Կարդում են միասին, վերլուծում բառերի։ Ապա դասատուն ծածկում ե կամ հավաքում այս բոլորը և սկսում ե ցուցադրել բառերը մեկ-մեկ։ Միքանի վայրկյան բառը գիտելուց հետո դասատուն ծածկում կամ հավաքում ե այդ բառը և պոաջարկում ե գրել հիշողությամբ։ Այսպիսով սովորողները տեսրերում գրում են հետեւյալը.

Դարբին

(Դարբին) Սողոն

(Դարբին Սողոն) օատ

(Դարբին Սողոն օատ) բան

(Դարբին Սողոն օատ բան) ե

(Դարբին Սողոն օատ բան ե) օինում։

Պետք ե հետեւել, վոր հիշողությամբ արտագրելիս սովորողները 1) չգրեն ցուցադրելու ժամանակ, 2) յետ

Հընկնեն և Յ) իրարից չարտագրեն: Առանձնապես  
դժվար զբողներին պետք է ոգնել անհատապես:

ԴԱՍ\*) № (Եջ 25)

Դասի ծրագիրը

1. Անցլալ դասի կրկնությունը (Եջ 24)...

- ա) կարդալ առանձին և խմբով.
- բ) կրկնել և գրատախտակի վրա գրել Լենինի խոսքերը: Ցանկացողներին առաջարկել կազմել պլակատ (տես Լենինի նկարի տակ) և փակցնել տանը կամ դպրոցում:

2. Զբույց կոռպերացիալի մասին.

- ա) վմբառեղից են գնում պետքական իշերը, պիտույքները.
- բ) ի՞նչմու ավելի ձեռնաու յէ կոռպերատիվից գնել,
- տ) ի՞նչ միջոցներով և պահպում և գործում կոռպերատիվը.
- դ) ի՞նչ արտօնություններ ունի կոռպերատիվից անդամը:

Տեղեկություններ գյուղի կոռպերատիվի մասին.—

Ի՞նչ ապրանքներ ունի, անդամների վարկավորումը, գները մասնավորի համեմատությամբ և այլն:

\* ) Դասը մշակվում է ընդհանուր կանոններով. դասի մշակումն այստեղ տալու նպատակն ե՝ ծանոթացնել հետազա ավելի ընդարձակ դասերի մշակման յեղանակին. ծանոթ մոմենտները չեն տրվում: Մոտավորապես նույն ձեռվ մշակվում են նաև ընթերցաբանի հոդվածները.

3. Խոսքի մշակումն—«կոպերատիվը մի կիլո պանրին տվեց 90 կոպեկ»: «Պ» տառի հանելը»: կարդալ և գրել հետեւյալ բառերը—«Պետրոս, Կարապետ, պանիր, կոպեկ», կոպերատիվ, սապոն»: Մշակել «Պետրոսը ու Կարապետը...» խոսքը, յուրացում «ըը» վանկի «ալանիրը, մասնավորը» բառերում:

4. Մշակել ապրանքների անունը շարժական այբբենով (օաբար, սապոն, դանակ, կացին, գերանզի): Գրել այդ անունները: Ծանոթացնել չափերին՝ կիլո, ոուբի, կոպեկ:

5. Հողվածը կարդալը:

6. Շարժական այբբենով կազմել ու կարդալ ձեռագիրը, նույնը արտագրել ձեռագիր (մասնավորի մոտ սապոնի կիլոն.... կոպեկ ե, իսկ կոպերատիվում.... կոպեկ),

### ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ (համառոտ)

Սկզբում գրել դասի և ու որվա թիվը. կարելի յե գրել կրճատ՝ հոռմեական թվանշանով (տես նախորդ հողվածի § 3-4):

Անցածի կրկնություն:

Զրուց կոռպերացիայի մասին:

Զրուցի լնթացքում պարզաբանել հետեւյալ բառերը՝ կոռպերատսվ, արտել, կիլո (լրիվ՝ կիլոգրամ=2<sup>1</sup>/<sub>2</sub>, գրվ.): գրել հետեւյալ զժվար ընթեռնելի բառերը (գրատախտակին)՝ կոպերատիվ, մասնավոր, (Կարապետ, Պետրոս), կոպեկ...

Մշակման համար վերցնել՝ «կոպերատիվը մի կիլո պանրին տվեց 90 կոպեկ» խոսքը, վոր ունի պատառով՝ միքանի (3) բառ. հողվածում կա միայն

մի բառ, վոր վերջին վանկում ունի «պ»։ Սակայն ինկատի ունենալով, վոր սովորողները բավականաշափ լուրացրել են «տառ հանելու» տեխնիկան, հանդուրժնի լի լին համարվում նաև այս բառերը՝ «կո-պե-րատի-վը, պան-րին, կո-պեկ»։ «պ» տառով վերջացող բառեր այս հոդվածում չկան։ Կարելի լի ասել այլ որինակներ (պապ և ալն)։ Խոսքը վերլուծվում ե բառերի, նշած բառերը՝ վանկերի։ Այդ վանկերից հանում են «պ» տառը, այնուհետև ալդ բառերը (կարելի յե ամբողջ խոսքը) գրել գրատախտակին, վորից հետո՝ սովորողները լավ դիտելով, իրենք ևս գրում են տետրերում։ Գրության ժամանակ ծանոթանում են «պ» տառի գծագրման։

Այս դասում ավելանում են սը, տը, ռը, վը վանկերը (նաև պե, պա, պեկ, պետ, պոն և ալն)։ այդ պատճառով ել մշակում ենք «ը» տառով վերջացող մի վանկ միայն՝ ռը (պանի-ըը, մասնավո-ըը)։


Ապրանքների անունները մշակելու նպատակն ե՝  
ա) մի միջոց ևս հետազայում հոդվածը կարդալը դյուրացնելու, բ) նոր բառերի գրության նախապատրաստություն, գ) աշխատանքների բազմազանություն, դ) գործնական միջոց՝ ապրանքների ցուցակ կազմելու։

Յոդվածը կարելի լի կարդալ մաս-մաս։ Յուրաքանչյուր նախադասություն նախապես կտզմելով շարժական տառերից։ Վերջում դասատուն ամբողջ կարդում և ինքը, ընդմիջութեներով։ Սովորողները հետեւում են, կարդալուց հետո տեղի յե ունենում բացատրական զրույց։ Կարդում են սովորողներն ամբողջ

խոսքերով, մեկ-մեկ, մյուսները հետևում են: Յեթե-  
մեծամասնությունը դժվարանում ե վորևե խոսք կամ  
բառ կարդալ, դասատուն ոգնում եւ Հարկ յեղած  
դեպքում մշակում են շարժական տառերով:

Գրության ընթացքում հատկապես ուշադրու-  
թյուն դարձնել «կոպերատիվ», մասնավոր» բառերի  
վրա, վորոնք դժվար են զրվում:

Հոդվածը նյութ ե տալիս բանավոր և գրավոր  
հաշվի. անվանական թվերի կրճատ գրելը, համեմա-  
տությունը (կիլո—դրամնքա), պանրի ու կարագի ար-  
ժեքը մասնավորի մոտենական կոտորերատիվում և այլն:



X

---

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0044740

[104]

А 1  
8090

ԳԻՒԸ 15 ԿՈՊ. (1 մ.)



И. ДУРГАРЯН

Руководство для преподавателей по азбуке  
„К КОММУНЕ“

Госиздат СССР Армении  
Эревань—1930